

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի տարում Երևանի պետական համալսարան ընդունվեց երիտասարդ սերնդի մի փայլուն կոհորտա, որին վիճակված էր կարեվոր դեր խաղալ մեր երկրի հասարակական կյանքի տարբեր բնագավառներում: Այդ սերնդի ներկայացուցիչներից է ականավոր պատմաբան, գիտության նշանավոր կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:

Վ. Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի Մառնեուլիի շրջանի Աղքյորփի գյուղում, ծառայողի ընտանիքում: Դեռ դպրոցական տարիներին նա հարկադրված էր կրելու պատերազմի դժվարությունները, հոգալու ընտանիքի հոգսերը՝ փոխարինել ռազմաճակատ մեկնած հորը, որի՝ ռազմաճակատից որդուն ուղղված նամակները տոգորված էին ոչ միայն պատերազմը հաղթանակով ավարտելու ոգով, այլև յուրահատուկ պատգամ էին նրան՝ դժվարությունների առջև երբեք չընկրկել, ապագայի նկատմամբ միշտ հավատով համակվել: Պետք է ասել, որ լավատեսության այս հատկանիշը մինչև օրս ուղեկցում է անվանի պատմաբանին:

Համալսարանական ուսումնառության տարիները, ինչպես իր սերնդակիցներից շատերի, այնպես էլ Վ. Բարխուդարյանի համար դյուրին չէին: Դրանք ուղեկցվում էին ոչ միայն նյութական դժվարությունները հաղթահարելու, այլև հասարակական կյանքի հեղձուկ մթնոլորտում անսայթաք ընթանալու ջանքերով: Հիմնականը մնում էր կայուն գիտելիքների ձեռքբերումը: Այդ տարիներին պատմաբանի հայացքների ձևավորման ու գիտության տվյալ բնագավառում մասնագիտանալու գործում մեծ էր համալսարանի դասախոսների՝ Աբ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Ս. Երեմյանի, Վ. Ռշտունու, Հ. Ժամկոչյանի դերը:

1950 թ. բարձր առաջադիմությամբ ավարտելով համալսարանը՝ Վ. Բարխուդարյանը հաստատապես որոշեց նվիրվել գիտությանը: Այնքան մեծ էր գիտության մեջ խորանալու երիտասարդ պատմաբանի ցանկությունը, որ նա հարկադրված էր հաղթահարել որոշ արհեստականություն: Ինչ-ինչ պատճառներով ասպիրանտական տեղերը հայտարարվել էին զբաղեցված, և գիտության մեջ խորանալու նրա ձգտումը փաստորեն մնում էր անիրականանալի: Բայց Վ. Բարխուդարյանն իր հաստատակամությամբ կարողացավ արժանանալ ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի ուշադրությանը և նրա մոտ հաջող քննություն բռնելուց հետո ընդունվեց ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա՝ Ս. Երեմյանի ղեկավարությամբ, մասնագիտանալով միջնադարյան Հայաստանի պատմության հարցերում:

Ասպիրանտական տարիների արդյունավետ ու լարված աշխատանքի շնորհիվ նա ժամանակին ավարտեց իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Հայաս-

տանի ավատատիրական հողատիրությունը IX-XI դդ.» թեմայով, որը հաջողությամբ պաշտպանեց 1954 թ.:

1955 թ. Վ. Բարխուդարյանը աշխատանքի ընդունվեց Հայաստանի պատմության պետական թանգարանում, որը գործում էր ԳԱԱ համակարգում: Այդ տարիներին ընդլայնվեց նրա գիտական հետաքրքրությունների ոլորտը: Դա են հաստատում 1905-1907 թթ. հեղափոխության պատմության աշխատություններին հեղինակի նվիրած վերլուծական ուսումնասիրությունները: 1958 թ. Վ. Բարխուդարյանը տեղափոխվում է ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտ, որտեղ 1959–1963 թթ. վարում է գիտական քարտուղարի, 1963-1967 թթ.՝ ավագ գիտաշխատողի, իսկ 1967 թ. մինչև 1990 թ.՝ ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենի պաշտոնները: Միաժամանակ 1980 թ. նա համատեղությամբ ղեկավարում է ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության բաժինը:

1950-ական թթ. կեսերին Խորհրդային Միության հասարակական կյանքում տեղի ունեցան որոշակի տեղաշարժեր: Ամբողջատիրական կապանքների որոշ չափով թուլանալուն զուգընթաց՝ հայ պատմաբանները հնարավորություն ունեցան մշակելու մինչ այդ հանիրավի անտեսված մի շարք հիմնահարցեր: Դրանցից մեկը հայ գաղթավայրերի պատմության հետազոտությունն էր: Վ. Բարխուդարյանը ոչ միայն դարձավ գիտական այդ նոր ուղղության հիմնադիրներից ու կազմակերպիչներից մեկը, այլև ձեռնամուխ եղավ Ռուսաստանի ամենախոշոր՝ Նոր Նախիջևանի գաղութի պատմության ուսումնասիրությանը: Դրան նա նվիրվեց շուրջ 20 տարի՝ ստեղծելով երկու ստվար հատորներից բաղկացած կապիտալ աշխատություն, որի առաջին հատորը 1968 թ. հաջողությամբ պաշտպանեց որպես դոկտորական ատենախոսություն: Այն ընդգրկում է գաղութի հիմնադրման՝ 1779 թ. մինչև 1861 թ., իսկ երկրորդ հատորը, որը լույս տեսավ 1985 թ.՝ 1861–1917 թթ. պատմությունը: Այսպիսով, խնդրո առարկա աշխատությունը լուսաբանում է պատմական բավական ընդգրկուն ժամանակաշրջանի՝ գրեթե մեկ ու կես հարյուրամյակի հայկական գաղութի պատմությունը, որն ինքնին խոսուն փաստ է: 1996 թ. այս աշխատության լրացված ու վերամշակված հատորյակը հրատարակվեց ռուսերեն: Առաջին հերթին աչքի են զարնում գրքում օգտագործված հարուստ սկզբնաղբյուրները: Հեղինակը դրանց հայտնաբերման, աղբյուրագիտական բազմակողմանի քննության ու շրջանառության մեջ դնելու համար երկար տարիներ պրպտումներ է կատարել Հայաստանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի և Ռոստովի տարբեր արխիվներում: Միայն գրքի առաջին հատորում Վ. Բարխուդարյանը ուսումնասիրել է արխիվային 34 ֆոնդերի նյութեր: Գրքում լայնորեն օգտագործված են նաև հայերեն ու ռուսերեն հրատարակված պարբերական մամուլի, տարաբնույթ փաստաթղթերի ու նյութերի ժողովածուների տվյալները, օտարազգի գիտնականների ու ճանապարհորդների ուղեգրությունները: Այս ամենը ոչ միայն չեն ծանրաբեռնում աշխատությունը, այլև ընդհակառակը՝ նպաստում են, որ գաղթօջախի պատմությունն առավել ամբողջական դառնա, և այն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Սակայն ինչպես ամեն մի գիտական աշխատանք, այնպես էլ Նոր Նախիջևանի գաղութի պատմության արժեքը միայն հարուստ սկզբնաղբյուրներով պայմանավորելը ճիշտ չէր լինի: Տվյալ պարագայում էականը նաև առկա նյութերի ընդհանրացումն է, դրանցով պատմական երևույթների խորքը թափանցելը, ընդհանուր օրինաչափությունների ու առանձնահատկությունների վերհանումը, որ հեղինակը կատարում է մեծ վարպետությամբ: Հեղինակի գրքում մանրակրկիտ քննության են առնվել ռուսական կառավարության հաշվենկատ քաղաքականության՝ ղրիմահայերին Կովկասի նախադռանը՝ Դոն գետի ափին գաղթեցնելու և այնտեղ հինգ գյուղերի հետ Նոր Նախիջևան քաղաքը հիմնելու դրդապատճառները: Ցույց են տրվել նաև վերաբնակիչների ձեռք բերած տնտեսական ու իրավաքաղաքական արտոնությունները՝

մասնավորապես գաղութի ներքին ինքնավար կարգավիճակը։ Պատմաբանը հիմնավորապես լուսաբանում է Նոր Նախիջևանի գաղութի տընտեսական կյանքի հիմնահարցերը, որոնց արդյունքները հիմնականում խարսխում է վիճակագրական և օժանդակ այլ տվյալների վրա։ Նա գաղութի տնտեսական վերելքն ու անկաշկանդ զարգացումը պայմանավորում է ոչ միայն ճորտությունից նրա զերծ մնալու հանգամանքով, այլև ձեռներեցությամբ ու աշխատասիրությամբ։ Օրինակ, ցորենի մշակության բնագավառում նորնախիջևանցիների ձեռքբերումներն այնքան ակնառու էին, որ այն դարձել էր արտահանության հիմնական ապրանքը։ Հայերի ջանքերով Հարավային Ռուսիայում տարածում գտան խաղողի մշակությունն ու շերամապահությունը։ Գերակշիռ դիրքեր ունեին բրդի, կաշվի ու ճարպի արտադրությունները։ Ընթերցողը հասու է լինում ոչ միայն գաղութում գործող շուրջ 40 արհեստներին վերաբերող տվյալներին, այլև հայ արհեստագործների ավանդույթների պահպանմանը։ Նորնախիջևանցի արհեստավորները պահպանում էին Անդրկովկասի հայկական արհեստագործական կազմակերպությունների՝ համքարությունների բնորոշ գծերը՝ հավատարիմ մնալով մայրենի լեզվին և ազգային սովորույթներին, նիստ ու կացին։

Հեղինակը կարևորել է Նովոռոսիայի տնտեսական կյանքն աշխուժացնելու գործում հայ առևտրականների խաղացած դերը. հայերը, ըստ նրա, Ռուսաստանի տոնավաճառների հիմնական ապրանք մատակարարողներն էին։

Հիշարժան են նաև հայ-ռուսական հարաբերություններում Նոր Նախիջևանի գաղութի խաղացած դերի վերաբերյալ Վ. Բարխուդարյանի դիտարկումները։ Ըստ նրա՝ նորնախիջևանցիները մասնակցել են Ռուսաստանի հասարակական կյանքի բոլոր կարևոր իրադարձություններին (1812 թ. Հայրենական, 1853-1856 թթ. պատերազմներին), միաժամանակ սերտ կապերի մեջ են եղել նաև Մայր Հայրենիքի հետ։

Բնորոշ է, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը խորապես համակել էր Նոր Նախիջևանի հայությանը։ Նրանք սերտ կապեր էին հաստատել ազգային-ազատագրական շարժման գործիչների հետ։ Հեղինակը ցույց է տալիս, որ 1895-1896 թթ. ջարդերից փրկված հայության բեկորներին օգնելու նպատակով Նոր Նախիջևանում կազմակերպվում են հանգանակություններ, հիմնվում է որբանոց, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Նոր Նախիջևանում և հայկական այլ գաղութներում ձևավորվում են կամավորական խմբեր։ Նոր Նախիջևանը դառնում է նաև տարբեր տեղերից Արևմտյան Հայաստան մեկնող կամավորական ջոկատների հանգրվան։ Հեղինակն անդրադարձել է նաև Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայ գաղթականներին նորնախիջևանցիների ցույց տված ջերմ ու սրտացավ վերաբերմունքին։

Վ. Բարխուդարյանի երկու գրքերն ավարտվում են պատմական տարբեր փուլերում Նոր Նախիջևանի հայկական գաղութի հարուստ մշակույթի ամփոփ ուրվագծով։

Առանց երկմտելու կարող ենք հաստատել, որ Վ. Բարխուդարյանի երկհատորյակը յուրահատուկ հանրագիտարան է, որի մեջ արտացոլվել է գաղութահայ կյանքն իր բնութագրական կողմերով։ Այն, իրոք, Վ. Բարխուդարյանի գիտահետազոտական աշխատանքի խոշորագույն արգասիքն է և հայ գաղթավայրերի պատմության հետազոտողների համար վաղուց դարձել է ուղենիշ, ու եթե նույնիսկ չլինեին վաստակաշատ պատմաբանի մյուս գործերը, միևնույն է, նա այդ աշխատությամբ արդեն իր պատվավոր տեղը գրված կլիներ ականավոր հայագետների շարքում։

Նոր Նախիջևանի գաղութի պատմության ուսումնասիրությամբ Վ. Բարխուդարյանը չդադարեց հայկական մյուս գաղթօջախների նկատմամբ հետաքրքրքրություն ցուցաբերելուց։ Նրա խմբագրությամբ ու նախաձեռնությամբ

երևան եկան «Հայ հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (1983), «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16-18-րդ դդ.» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996) հոդվածների ժողովածուները։ Հայ-հունգարական կապերին նվիրված ժողովածուն, որ ստեղծվեց Հայաստանի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների համագործակցությամբ, նորահայտ հարուստ փաստաթղթեր է պարունակում Հունգարիայի ազատագրական պայքարին, պետական կառավարմանն ու մշակութային կյանքին հունգարահայերի ցուցաբերած մասնակցության մասին։ Նշված ժողովածուի համար Վ. Բարխուդարյանը պարգևատրվեց Հունգարիայի գիտությունների ակադեմիայի մեդալով։

Վ. Բարխուդարյանը մշակեց հայ գաղթավայրերի պատմության գիտական հայեցակարգ, տվեց նրա պարբերացումը, ընդ որում, կոնկրետ նշեց պատմական հաջորդական փուլերի՝ միջնադարի, նոր ու նորագույն ժամանակաշրջանների առանձնահատուկ գծերը։

Հոբելյարի գիտական վաստակում ակնառու է նաև հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրությունը։ Թեև Նոր Նախիջևանի գաղութի պատմությունը հայ-ռուսական հարաբերությունների շղթայի առանձին օղակն է, այնուամենայնիվ, հեղինակը արժեքավոր մենագրություններ է նվիրել երկու ժողովուրդների պատմական կապերին, 1905-1907 թթ. իրադարձություններին և ուրիշ այլ հարցերի։

1960-ական թթ. սկզբից Վ. Բարխուդարյանը սևեռուն ուշադրություն դարձրեց խորհրդահայ պատմագրության զարգացման միտումներին և իր ընդհանրացնող աշխատություններում ուրվագծեց ոչ միայն նվաճումները, այլև մատնանշեց առկա թերությունները, խեղաթյուրումներն ու չլուծված հիմնահարցերը։ Հեղինակը, միաժամանակ, առաջադրեց ուղղություն տվող ու ավարտուն մի քանի տեսակետներ։ Նշենք դրանցից մեկ-երկուսը։

Հին Հայաստանի հասարակարգի հիմնահարցին անդրադառնալը նա դիտում է տվյալ բնագավառի ուսումնասիրության անկյունաքար։ Կարևորելով հայ պատմաբանների կողմից հին և միջնադարյան Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պատմության հարցերի ուսումնասիրությունն ու նոր սկզբնաղբյուրներով դրանց հարստացումը՝ հեղինակը, միաժամանակ, առաջնակարգ նշանակություն տվեց հայ եկեղեցու պատմության համակողմանի ու հիմնավոր հետազոտության անհրաժեշտությանը։

Վ. Բարխուդարյանը իրավացիորեն չի ընդունում այլ երկրների պատմության առանձնահատկությունները Հայաստանի վրա տարածելու սկզբունքը, մերժում կրոնաաղանդավորական շարժումները միակողմանի ներկայացնելու սխեման և այլն։

Վ. Բարխուդարյանը նույն համոզչությամբ ընդգծեց մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող XIX դ. և XX դ. առաջին տասնամյակների ազգային-ազատագրական պայքարի, ազգային կուսակցությունների, 1917-1920 թթ. քաղաքական բուռն իրադարձություններով լեցուն ժամանակաշրջանի անաչառ լուսաբանության անհրաժեշտությունը, հակառակ պարագայում դա կնշանակեր խեղաթյուրել պատմությունը և զրկել գիտականությունից։ Պատմագիտական անանց արժեք ունեն հայ ականավոր պատմաբաններ Աշ. Հովհաննիսյանի, Աբ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Ս. Երեմյանի, Բ. Առաքելյանի, Մ. Հասրաթյանի, Հ. Անասյանի և Գ. Սարգսյանի կյանքին ու գիտական գործունեությանը նվիրված Վ. Բարխուդարյանի հոդվածները, որոնցում հեղինակը քննության է առել ու արժեքավորել նրանց պատմագիտական ժառանգությունը։

Վ. Բարխուդարյանը մեծ ներդրում ունի ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի ստեղծման աշ-

խատանքներում։ Նա այդ բազմահատորյակի հեղինակներից է, խմբագիրն ու նրա գիտակազմակերպական աշխատանքները համակարգողը։ Գիտական ակնառու վաստակի համար Վ. Բարխուդարյանը 1986 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1994 թ.՝ ակադեմիկոս, 1990 թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, իսկ 2000 թ.՝ նաև փոխնախագահ։ 2004 թ. Վ. Բարխուդարյանը ԳԱԱ հայագիտության ու հասարակական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն է։

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը մեծ եռանդով մասնակցում է հանրապետության պատմագիտական կյանքին, նպաստում պատմաբան կադրերի պատրաստմանը։ Նա ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ԵՊՀ պատմության ֆակուլտետի և բարձրագույն որակավորման հանձնաժողովի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ է։

Հայաստանի անկախության հռչակումից հետո Վ. Բարխուդարյանը նախաձեռնեց հայոց պատմության դպրոցական նոր դասագրքերի ստեղծման գործը։ Նրա խմբագրությամբ ստեղծվեց չորս դասագիրք, որոնք հրատարակվեցին մի քանի անգամ և մինչև օրս օգտագործվում են դպրոցներում։ Վ. Բարխուդարյանը Երվանդ Փամբուկյանի համահեղինակությամբ սփյուռքահայ դրպրոցների համար հրատարակեց «Հայոց պատմություն» դասագիրքը։

Նա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է և ակտիվորեն մասնակցում է հայոց եկեղեցու հոգևոր ու մշակութային գործունեությանը։ Վ. Բարխուդարյանը ղեկավարել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան գիտական խորհուրդը, ակտիվորեն մասնակցել հանրապետության գիտակրթական հաստատությունների ու հոգևորականության ուժերով կազմակերպվող գիտաժողովներին և դրանց նյութերի հրատարակությանը։ 2005 թ. նրա խմբագրությամբ հրատարակվեց «Աստվածաշնչական Հայաստան» գիտաժողովի արժեքավոր նյութերի ժողովածուն։ 2007 թ. հոբելյարը պարգևատրվեց Ս. Սահակ և Ս. Մաշտոց շքանշանով։

Երկար տարիներ հոբելյարը ջանադիր աշխատանքներ է կատարում տարբեր երկրներում ստեղծագործող հայագետների հետ կապերի հաստատման ու ամրապնդման գործում։ Դրա վկայությունը դարձավ հայագիտական առաջին միջազգային համաժողովի կազմակերպումը, որտեղ նա հանդես եկավ ծրագրային զեկուցումով։

Վ. Բարխուդարյանի գիտական աշխատություններն ու գիտակազմակերպչական ունակությունները մեծ ճանաչում են բերել նրան մեզանում ու արտերկրում, ապահովել պատվավոր տեղ պատմական գիտության մեջ։ Նրա վաստակի ճանաչման վկայությունը ծննդյան 80-ամյակի կապակցությամբ հայրենիքի բարձր պարգևով Մեսրոպ Մաշտոցի անվան շքանշանով պարգևատրումն էր։

Վ. Բարխուդարյանն աչքի է ընկնում իր սկզբունքայնությամբ, գիտության նկատմամբ ունեցած մեծ նվիրումով։ Նրան բնորոշ են լայնախոհությունը, հոգեկան ջերմությունը, մարդկանց հետ շփվելու անմիջականությունը։ Հոբելյարը հարուստ է ստեղծագործական նորանոր ծրագրերով ու մտահղացումներով։ Նա եռանդուն կերպով իրականացնում է «Հայոց պատմություն» քառահատորյակի գլխավոր խմբագրի պատասխանատու գործը, պատրաստում հայ գաղթավայրերին նվիրված նոր աշխատություններ։

Մեծարգո հոբելյարին ցանկանք, որ իրեն բնորոշ առույգությամբ ու լավատեսությամբ երկար տարիներ շարունակի հայրենի գիտության նվիրյալի առաքելությունը։

ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ. Ս.
Պատմական գիտությունների թեկնածու